ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 13

ք. Բյուրեղավան *« 26 » օգոստոսի» 2025թ.*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը՝ ի դեմս համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի, և «Հրայր Պապյան Էդիկի» անհատ ձեռնարկատերը, այսուհետ՝ «Գովազդատու»՝ ի դեմս Հրայր Պապյանի (անձնագիր՝ AS 0665462, տրված՝ 25.03.2019թ., 059-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 39 շենք 1 բնակարան)՝ համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 41-Ն որոշման և ՀՀ օրենսդրության, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բյուրեղավան համայնքի ղեկավարը 2025 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրվում է տեղադրել 1.2 քմ ընդհանուր մակերեսով արտաքին այլ գովազդ՝ Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 2/83 հասցեում գտնվող բենզալցակայանի գործունեության համար առանձնացված շենքի ճակատային մասում :

1.2. Վահանակների չափերը և քանակը պայմանագրի կնքման պահին կազմում են 0.5 մ x 0.2 մ, 1.1 մ x 0.2 մ, 0.9 մ x 0.2 մ, 0.9 մ x 0.2 մ, 1.1 մ x 0.2 մ, 1 մ x 0.2 մ և 0.5 մ x 0.2 մ, ընդամենը՝ 1.2 մ^2:

2.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. «Գովազդատու»-ն վճարում է տեղական տուրք 1 քմ գովազդային մակերեսի համար՝ ամսական 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ, ընդհանուր 1.2 քմ արտաքին մակերեսով գովազդի համար՝ ամսական 1800 (մեկ հազար ութ հարյուր) դրամ:

2.2. Վճարումները կատարվում են Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202411 բանկային հաշվեհամարին՝ մինչև յուրաքանչյուր օրացուցային ամսվա 1-ը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 2/83 հասցեում գտնվող բենզալցակայանի գործունեության համար առանձնացված շենքն հանդիսանում է «Գովազդատու»-ի սեփականությունը:

3.2 Գովազդի չափերը, տեսքը փոխելու մասին «Գովազդատու»-ն պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բյուրեղավանի համայնքապետարանին:

3.3 Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 41-Ն որոշմամբ սահմանված պարտավորությունները «Գովազդատու»-ի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով `«Գովազդատու»-ից ստանալով համապատասխան փոխհատուցում:

3.4 Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, «Գովազդատու»-ն վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

3.5. «Գովազդատու»-ի կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման, դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է«Գովազդատու»-ին:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

4.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի լրիվ կամ մասնակի չկատարման համար, եթե այդ չկատարումը հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք դուրս են կողմերի վերրահսկողությունից և կարող են որակավորվել որպես արտակարգ իրավիճակ կամ այլ աղետ (բնական աղետներ, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ և այլն):

4.2. Եթե վերոհիշյալ հանգամանքներից որևէ մեկը անմիջականորեն ազդել է պայմանագրային պարտականությունների ժամկետում չկատարման վրա, սույն պայմանագրի ժամկետը երկարացվում է այդ հանգամանքների տևողության ժամկետով:

4.3. Այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել են այս հանգամանքները, պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 10 տաս օրվան ընթացքում՝ սկսած դրանց վրա հասնելու պահից, գրավոր ծանուցել մյուս կողմին:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ	ԳՈՎԱԶԴԱՏՈՒ Ա/Ձ «ՀՐԱՅՐ ՊԱՊՅԱՆ ԷԴԻԿԻ»
Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ	Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ
ք. Բյուրեղավան, Վազգեն Ա Վեհափառ փողոց թիվ 1	ք. Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց 2/83
վարչական շենք	
Հեռախոսահամար՝ 0222 6 32 36	Հեռախոսահամար՝ 094 84 28 72
ՀՎՀՀ - 03546187	ՀՎՀՀ - 81685332
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական բանկ	
Հ/Հ 900105202411	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ Ա.Զ. Հ. ՊԱՊՅԱՆ